






**ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ՖԱՍՏԻՈԼՈՋԸ ՅԵՎ ԴԱՅՔԱՐԸ  
ՆՐԱ ԴԵՄ (ԲԱՓԱՆԱԿ)**

**ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ**

Մեր դյուզատնտեսութեան մեջ սոց-անասնապահութեան խնդիրը դեռևս հանդիսանում է ամենանեղ տեղերից մեկը: Սակայն Չ-րդ հնգամյակում մենք պետք է հիմնականում լուծենք սոցիալիստական անասնապահութեան զարգացման խնդիրը: Այդ նպատակով կուսակցութեանն ու կառավարութեանը մի շարք կոնկրետ միջոցներ են ձեռք առել, վորոնք արմատական բեկում են մտցրել մեր անասնապահութեան զարգացման մեջ:

Առաջին հնգամյակում կազմակերպվել են բազմաթիվ անասնապահական խորհատնտեսութեաններ ու կոլտնտեսական անասնապահական ֆերմաներ, վորոնք խոշոր նվաճումներ են ձեռք բերել արդեն: Այսոր արդեն բացատրութեաններ չեն այն անասնապահական խորհատնտեսութեաններն ու կոլտնտեսական ֆերմաները, վորոնք հիմք են դրել կուլտուրական-սոցիալիստական անասնապահութեան, ունեն որինակելի, տաք ու լուսավոր դոմեր, կերի կայուն բազա, անասուններին խնամում են զոտմիլմուծի պահանջներով և այլն: Սակայն, սոցիալիստական անասնապահութեան հաղթական վերելքն ապահովված կլինի այն ժամանակ միայն, յեթե այս ամենին ավելացվի նաև ուժեղ ու համառ պայքարն անասունների հիվանդութեանների և մասնավորապես համաճարակների դեմ: Իսկ այդ պայքարը միմիայն մասնագիտական կադրերի սահմանափակ թվով-մղել չի կարելի: Դրա համար անհրաժեշտ է, վոր անասունների պահպանման ու խնամքի գործով զբաղված խորհատնտեսական ու կոլտնտեսական վորջ մասսան զինված լինի այն գիտելիքներով, վորոնցով կարելի յե պայքարել անասունների հիվանդութեանների ու համաճարակների դեմ:

Անհանդուրժելի յե, վոր մինչև այժմ մեր կոլտնտեսական ու խորհատնտեսական մասսաները չունեն այնպիսի զրքեր ու բրդյուրներ, վորոնցից նրանք տեղեկանային, թե ինչպիսի նախա-



դղուշական (սրբոֆիրակախի) միջոցներ պետք և ձևք ստնեն իրենք՝ հիվանդություններն ու համաճարակները կանխելու համար և ինչպես պիտի կուլել արդեն իսկ ծագած հիվանդությունները գեմ:

Ահա այդ բացը լրացնելու նպատակով և, ժոր ՀՄՆՀ Հող-ժողկոմատի Անասնարուժական Վարչությունը ձեռնարկել և միշարք հանրամատչելի գրքերի հրատարակության՝ 1933—34 թվերի ընթացքում: Այդ գրքերը, բացի կոլտնտեսական-խորհրդանտեսական մասսաներից, անհրաժեշտ են նաև վերջին տարիներս մեր պատրաստած բաղմոթով անասնարուժակներին ու սանիտարներին, ժորոնք ուսերեն չիմանալու պատճառով չեն կարողանում խորանալ իրենց մասնագիտության մեջ:

Անասնարուժական գիտահետազոտական ինստիտուտի գիտական աշխատող Եդ. Գալթյանի սույն «Բյախանակ» գրքույկը մեկն և մեր հրատարակելիք գրքերից և իրենից ներկայացնում և մի ձեռնարկ՝ անասնապահության ճակատում աշխատողների համար: Այս գրքույկը կարևոր և ինչպես անասնարուժական աշխատավորների միջին կազմի, այնպես էլ զոտակնիկների, բրիգադիրների, կոլտնտեսականների ու խորհրդանտեսությունների բանավորների համար:

Գրքույկում նշված միջոցների ճիշտ, ժամանակին ու մասսայորեն կիրառելու միջոցով խոշոր չափով հնարավորություն կըստեղծվի հաջող պայքար մղելու այդ հիվանդության դեմ և ապահովելու սոցիալիստական անասնապահության արագ զարգացումը:

Ս. ՈՂԱՆՅԱՆ

## ՄԻՔԱՆԻ ԽՈՍՔ ԼՅՈՐԳԱ-ՆԻՃՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վոչխարները և խոշոր յեղջերավոր անասունների ճիճվային մի շարք հիվանդություններից, մեր՝ Հայաստանի պայմաններում իր կորստաբերությամբ աչքի յե ընկնում յարդա-ճիճվային հիվանդությունը, վորը գիտության մեջ հայտնի յե «Փասցիոլոզ», իսկ ժողովրդի մեջ «քափանակ» անունով:

Փասցիոլոզի պատճառած վնասներն անասնապահության և մասնավորապես վոչխարաբուծության համար շատ խոշոր և, վորի համար և ՍՄՀՄ-ի բազմաթիվ շրջաններում տարեց-տարի նրա տարածումը լայնատարած չտվերի յե հասնում, տանելով հարարավոր գլուխ զոհեր: Յերբեմն այս հիվանդության պատճառով վնասներն այնչափ կորստաբեր են լինում, վոր մի շարք վայրերում և շրջաններում անասնապահությունը՝ վորպես պուղատնտեսության ճյուղ՝ կորցնում և իր տնտեսական նշանակությունը:

Լյարդա-ճիճվային հիվանդությունն առաջ և գալիս ճծիչ ճիճունների միջոցով, վորոնք գիտության մեջ հայտնի յեն «Փասցիոլոզ» անունով, իսկ նրանց պատճառած հիվանդությունը կոչվում և «Փասցիոլոզ»:

Այս կամ այն կենդանու Փասցիոլոզով հիվանդ լինելը վորոշելու և համապատասխան բուժում գործադրելու համար անհրաժեշտ և իմանալ տվյալ մակարուցծի (ճճվի) արտաքին տեսքը, ներքին կառուցվածքը և գլխավորապես նրա կենսագործության պայմանները:

Փասցիոլան — տափակ, համեմատաբար խոշոր մակարուցծ ճիճու յե, 2—3 սանտիմետր յերկարությամբ, մոտավորապես մեկ սանտիմետր լայնությամբ, և արտաքին տեսքով նման և տերևի-նրա մարմնի կենտրոնն սպիտակավուն և, իսկ յեզերքները — սև: Արտաքուստ ճիճվի մարմինը ծածկված և փշիկներով, վորոնք տե-

սանկի յին դառնում միմիայն մանրադիտակի տակ, հարյուրավոր անգամ խոշորացնելուց հետո

Մարմնի առջևի ծայրում ճիճուն ունի յերկու ծծուկ, վորոնցից առջինը կոչվում է բերնի ծծուկ, հետևինը՝ վորովայնի բերնի և վորովայնի ծծուկների արանքում գտնվում է արական և իգական սեռական որգանների արտաքին վերջավորություններ։ Մարմնի առջևի մասում գտնվում է նույնպես ճիճվի ձվերով լի արգանդը։ Այս մակարույծը յերկսեռ և, այսինքն՝ նա միաժամանակ ունի թե արական և թե իգական սեռական որգաններ, վորոնց շնորհիվ ընդունակ է ինքնարեղմնավորվելու։ Փասցիոլայի ձվերը հնարավոր է տեսնել և հայտաբերել միմիայն մանրադիտակի ոգնությամբ, նրանք մուգ-դեղնադույն են, ձվաձև և իրենց մի ծայրում ունին կափարիչ։ Հասունացած, խոշոր ճիճուն հայտաբերվում է հիվանդ անասունի լյարդում

### ՖԱՍՑԻՈՒԱՅԻ ԶԱՐԿԱՅՈՒՄԸ (ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ)

Փասցիոլայի աճումն ու զարգացումը շատ բարդ է և կատարվում է բացառապես միջնորդ տիրոջ (промежуточный хозяин) խիսունջի ոգնությամբ, վորն առաջին անգամ ապացուցել է հայտնի գիտնական Լեյկարտը, 1876 թվին։

Հասունացած ֆասցիոլաներն ապրելով այս կամ այն կենդանու կամ մարդու մաղձային անցքերում և լյարդի մաղձապարկում՝ արտադրում են ձվեր, վորոնք մաղձի հետ միասին անցնում են աղիքների մեջ, իսկ վերջինից, աղբի հետ, արտաթորվում են դուրս։ Վոչխարի աղբի ամեն մի գնդիկում, և առհասարակ, վարակված այլ կենդանիների աղբում գտնվում են այդ ճիճվի հարյուրավոր ձվեր։

Աղիքներից դուրս արտաթորվելով, ձվերն իրենց հետագա զարգացման համար պահանջում են նպաստավոր պայմաններ՝ խոնավություն (ճահճացած մարգագետին, լճակ, ճահիճ և այլն) և համապատասխան ջերմային պայմաններ (10<sup>0</sup>—15<sup>0</sup> տաքություն)։

Հիվանդ կենդանու աղբի հետ դուրս արտաթորված ձուն, ընկնելով ճահճոտ տեղեր, լճացած ջրերի մեջ կամ մեղմ հոսանք ունեցող առուների մեջ, նայած շրջապատի ջերմության, 3—6 շաբաթից սկսում է զարգանալ, դառնալով թարթչավոր թրթուր։

վորը ձվից դուրս գալով, նույնպես սպրում եւ առուներէ, ճահիճ-  
ներէ մեջ, հեղեղվող մարգագետիններում և այլն: Այդպիսի թար-  
թիչալոր թրթուրը կոչվում եւ «միրացիդի», նա շատ աշխույժ լո-  
ղում եւ ջրում, վորտեղ և հնարավորութիւն ունի հանդիպելու իր  
միջնորդ տիրոջ՝ խխունջին: Յեթե այդ սաղմին (միրացիդի) չհա-  
ջողվի հանդիպել խխունջին՝ նա մոտ տպագայում մահանում եւ  
Իսկ յեթե նա գտնում եւ ջրում իր միջնորդ տիրոջը  
(խխունջին)՝ մտնում եւ նրա մարմնի մեջ և հասնելով նրա լյար-  
դին, հանում եւ իր թարթիչալոր թաղանթը և յերկու շաբաթից ձե-  
վափոխվում ու մտնում եւ իր զարգացման յերկրորդ շրջանը: այդ  
վիճակում թրթուրը կոչվում եւ «սպորոցիստա»:


Արագորեն աճող սպորոցիստայի մեջ (խխունջի մարմնում)  
զարգանում են յերկայնաձիգ թրթուրներ, վորոնք մարմնի առջևի  
մասում ունենում են աղիքային խողովակի հետ կապված ծծուկ.  
դրանք կոչվում են «րեդիներ»: Մի սպորոցիստայից զարգանում  
են 5—8 րեդիներ, ծծուկով և աղիքային խողովակով ոժտված:  
Վերջապես րեդիներից զարգանում են նոր թրթուրներ՝ «ցերկա-  
րիներ»: վերջիններս ունենում են արդեն յերկու ծծուկ և պոչ:  
Յուրաքանչյուր րեդիի մարմնում կարող եւ զարգանալ մինչև 20  
պոչավոր թրթուրներ—ցերկարիներ, վորոնք հասունանալով դուրս  
են գալիս վերջապես խխունջի մարմնից և ընակվում են ջրերում:

Այդպիսով ուրեմն, ճիճվի մի ձվից կարող են գոյանալ հա-  
րյուրի չափ նոր թրթուրներ, վորոնք ընդունակ են լինում վա-  
րակելու կենդանիներին և մարդկանց և նորից դառնալու նրանց  
լյարդում հասունացած ֆասցիոլաներ:

Յերկարիներն իրենց պոչի շնորհիվ ազատ լողում են ջրե-  
րում: Ջրից նրանք դուրս են գալիս ցամաք ու քիփ ամրանում  
են բույսերի ցողուններին, և, կորցնելով իրենց պոչը, ձևափոխ-  
վում են թրթուրների նոր սերնդի, կոչվելով «ադուլեսկարիներ»:  
Վերջիններս ծածկվում են խիտ թաղանթով, ուստի և ընդունակ  
են լինում մինչև 6 ամիս վողջ մնալու խոնավ և ճահճոտ տեղե-  
րում:

Վոչխարները, այժերն ու խոշոր յեղջերավոր անասուննե-  
րը, ձին, նապաստակն ու այլ բուսակեր կենդանիները (այս մա-  
կաբույժի վերջնական տերերը) վարակված արոտավայրում  
արածելիս կամ ջրարբի ժամանակ, կուլ են տալիս ցերկարիներ

կամ աղուեսկաբիններ և այդպիսով վարակվում են Ֆասցիոլոզով: Ճասցիոլոզով անասունները կարող են վարակվել նաև գոմում, յեթե նրանց կերակրում են թերի չորացրած խոտով:



Ֆասցիոլայի զարգացման ընթացքի սքեման.

Թրթուրները կերի կամ ջրի հետ մտնելով անասունի մարսողական խողովակի մեջ, ազատվում են իրենց արտաքին թաղանթից, անցնում են մաղձային անցքերի մեջ, վորտեղ և դարձանալով, հետզհետե դառնում են հասունացած Ֆասցիոլաները և լինում ձվեր արտադրելու:

Այդպիսով, պետք է գիտնալ և հիշել, վոր բուսակեր կենդանիները վարակվում են Ֆասցիոլոզով վոչ թե ճիճվի ձվերը կուլ տալով, այլ կերի և ջրի հետ կուլ տալով: Խխունջի մարմնում միշտ պիտի լինեն խխունջների յենթարկվելուց հետո, զարգացած թրթուրներին:

Ֆասցիոլոզը լայն ծավալով տարածվում է միմիայն խոնավ և ճահճոտ վայրերում, վորոնք նպաստում են Ֆասցիոլայի միջ-



նորդ տիրոջ՝ խխունջի բազմացմանը, առանց վորի ֆասցիոլայի պարզացումն ու բազմացումը հնարավոր չէ:

Ֆասցիոլայի միջնորդ տեր չեն կարող լինել ամեն տեսակի խխունջները, այլ միմիայն քաղցրահամ ջրերի խխունջը, վորը սուր կոնածե է, ունի չորս հարկանի պարուրածե խեցի և բարձրութեամբ հագիվ հասնում է մի սանախմետրի:

Հայտնի գիտնական Լեյկարան այդ խխունջի մասին ասում է, վոր յուրաքանչյուր դյուղացի տնտեսավար պետք է լավ ճանաչի դրան, վորովհետև դա ըստ յերևույթին թեև մի անմեղ արարած է համարվում, բայց իրականութեան մեջ մեր անասունների վտանգավոր թշնամիներից մեկն է հանդիսանում: Գժբախտաբար այդ փաստը կոյունտեսականների և խորհոտնտեսականների համար, մանավանդ Հայաստանի պայմաններում, մնում է մինչև այժմ անհայտ:

Չնայած վոր խխունջները բավականաչափ տարածված են և մեղանում, բայց սողերիս գրողը, հարց ու փորձի միջոցով հնարավորութեան չի ունեցել տեղացի ազգաբնակչութեանից ստույգ տեղեկութեաններ հավաքել խխունջների տարածման տեղերի մասին:

## ՖԱՍՑԻՈԼՈՂՐ ՎՈՐՊԵՍ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Կենդանիները ֆասցիոլոզով վարակվում են գլխավորապես արոտավայրում՝ արածելով խոնավ ու ճահճոտ տեղերում, ուր, ինչպես ասացինք վերևում, սպրում են խխունջներ:

Այդպիսի տեղերում ջուր խմելուց կամ արածելուց և կամ կանաչեղենն առանց լվալու ուտելուց՝ թե անասունները և թե մարդիկ կարող են վարակվել ֆասցիոլոզով, կուլ տալով աղուխկարիներ կոչված թրթուրներից:

Գոմերում սահմող անասունները նույնպես կարող են վարակվել ֆասցիոլոզով, յեթ նրանց տրվող խոտը հնձված է լինում խխունջներով առատ մարզագետիներում կամ ժամանակ առ ժամանակ հեղեղվող տեղերում:

Լավ չորացրած խոտն անվտանգ է համարվում, վորովհետև աղուխկարիները չորացրած վիճակում շուտ են մահանում:

Փորձերով հաստատված է, վոր նույնիսկ ֆասցիոլոզի տա-

րածված վայրերում, յիժե անասուններին պահում են դռներում և կերակրում են նրանց չավ չորացրած խոտով՝ հնարավոր և լինում պաշտպանել ֆասցիոլոզով հիվանդանալուց, յիժե, իհարկե հնարավորութուն չորվի ցերկարիներով առատ ջրի միջոցով վարակվելու:

Բացառիկ դեպքերում հասունացած սաղմերով (թրթուրնւրով) վարակվելու դեպքեր կարող են տեղի ունենալ պատահմամբ, խոտի հետ միասին բերված խխունջների միջոցով, վորովհետև հայտնի յե, վոր խխունջը չորացած իսկ վիճակում ընդունակ և սպրելու շարաթիների և նույնիսկ ամսվա ընթացքում: Բայց սովորաբար, ամենից հաճախ կենդանիները վարակվում են խխունջներից խոտհարքում կամ ազդիսկարիներով վարակված արոտավայրում:

Ինչպես վերևում արդեն ասել էյինք, խխունջի մարմնում կատարվող ֆասցիոլայի սաղմի դարգացման համար նախնական պայման և հանդիսանում ֆասցիոլայի ձեերի արտաթորումը խխունջների բնակավայրերում:

Վարակված անասուններն արոտավայրում ազրի հետ միասին, սովորաբար, արտաթորում են նաև ֆասցիոլայի ձվեր: Լեռնային արոտավայրերը, ուր ամառը քոչում են վոչխարների հոտերն այլ և այլ շրջաններից՝ նույնպես դերծ չեն վարակից, վորովհետև վարակված և հիվանդ վոչխարներն այնտեղ ել ազրի հետ արտաթորում են մեծ քանակութամբ ճիճվի ձվեր:

Բացի վոչխարներից, ֆասցիոլայի ձվերի տարածողներ են հանդիսանում նաև խոշոր յեղջերավոր անասունը—ձին, ինչպես և վայրի կենդանիները:

Վերջապես մարդազետինները կարող են վարակվել յերբ հողը պարարտացնում են վոչխարի կամ տավարի թարմ աղբով, մանավանդ, յերբ տվյալ մարդազետնում կան խխունջներ, իսկ ազրի մեջ՝ ֆասցիոլայի ձվեր:

## ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔԸ

Փասցիոլոզը կենդանիների վրա հայտարերվում և մեծ մասամբ աշնանը և ձմրանը (հոկտեմբերից մինչև մարտ): Դրա պատճառն այն և, վոր կենդանիները վարակվում են ամառվա վերջին

կամ աշնանը, վորովհետև հոտերը, մանավանդ վոչխարները, դարնան և ամռանն արածուս են լեռներում և յերկրորդ հունձից հետո միայն իջնում են սարից դաշտերն ու մարգագետինները, վորտեղ արածելիս և կարող են կուլ տալ մեծ քանակությամբ ֆասցիոլայի սաղմեր:

Ինչ գարնանը, վոչխարների աղբի հետ արտաթորված ֆասցիոլայի ձվերից, խոնավ տեղերում՝ խխուհնների մարմնի մեջ, մինչև ամառ, աճում են մեծ քանակությամբ ֆասցիոլայի հասունացած սաղմեր Ամռանն ու աշնանը, ընկնելով վոչխարի կամ սավարի մարսողական խողովակի մեջ՝ ադուխակարիններն իրենց դարգացման և հասունացման համար պահանջում են մոտ 2—3 ամիս ժամանակամիջոց: Յեւ հենց այդ և պատճառը, վոր կենդանու որդանիզմին հասունացած ֆասցիոլաների պատճառած ծանր խանգարումները զուգադիպում են ձմրան ամիսներին: Մինչդեռ գարնանը, ընդհակառակը՝ արոտավայրի սկզբնական շրջանում հիվանդութունը սովորաբար մեղմանում է, վորովհետև նախ ձմրանը վարակվելու նոր դեպքեր տեղի չեն ունենում և ապա գարնանն անասուններն առատ սնվելով, ավելի ուժեղ դիմադրելու ընդունակութուն են ձեռք բերում ֆասցիոլաների ֆուսսակար ազդեցության դեմ:

Մեկ եւ պետք է նշել, վոր լինում են և այնպիսի տարիներ, յերբ անասունները, համեմատած ուրիշ տարիների հետ՝ ավելի շատ են հիվանդանում. այդպիսի դեպքերում համաճարակը հաճախ ընդունում է այնպիսի ծավալ, վոր վորոշ շրջաններում խապառ վոչնչացնում է վոչխարների և խոշոր յեղջերավոր անասունների հոտերը, իսկ յերբմն ամբողջ յերկրի և նույնիսկ պետության անասնապահութունը, ինչպես որինակ՝ Ֆրանսիայի Նլզաս նահանգում—1876 թ., Սլավոնիայում—1882 թ. և 1889 թ., Հունգարիայում—1910, 1911, 1923 և 1925 թվերին և վերջապես 1910 և 1912 թ. Ֆրանսիայում, յերբ համաճարակը միջանի նահանգներում իսպառ վոչնչացրեց անասնապահութունը, իսկ վորոշ նահանգներում կրճատեց 50—80 %-ով:

Այդպիսի համաճարակներ սովորաբար տեղի յեն ունենում անձրևային տարիներին և կամ մեծ հեղեղումներից հետո—լեռնային հովիտներում և գետերի դաշտավայրերում: Ծնորհիվ ստորյերկրյա ջրերի մակերևույթի ժամանակավոր բարձրացման դար-

նանք կամ աշնանը՝ դաշտավայրերի մեծ տարածություններ ճան-  
ճանում են, վորտեղ և խխունջների արագ բազմացման հնարու-  
վորություններ են ստեղծվում:

Այժմ, ծանոթանալով ֆասցիոլուզի դարդացման բոլոր պայ-  
մանների հետ, հասկանալի յեն դառնում յերբեմն նկատվող ֆաս-  
ցիոլուզի կորստաբեր համաճարակները:

## ՑԱՍՅԻՈՒՈՋԻ ՊԱՏՃԱՌԱՍ ՓՈՓՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԵՆԴԱՆՈՒ ՈՐԳԱՆԻՉՄՈՒՄ

Մակարույժը մտնելով կենդանու մարմնի մեջ և տեղավոր-  
վելով լյարդում, սկսում է ցուցաբերել իր հիվանդաբեր ազդեցու-  
թյունը, վորն արտահայտվում է հետևյալ կերպ.

Լյարդի մաղձային անցքերում և մաղձապարկում, շնորհիվ  
իրենց մարմնի վրա յեղած փշերի, ֆասցիոլաները պատճառում  
են մեխանիկական ֆրասվածքներ (վերքեր):

Բացի դրանից, մաղձային անոթներում շարժվելու հետևան-  
քով, ճիճուն խղճում է նրանց պատերը, քայքայում է լյարդի բը-  
ջիջներն ու արյունատար անոթները, վորով և պատճառում է ա-  
րյունահոսություններ:

Ծիճունները մեծ քանակությամբ կուտակվելով մաղձային  
անցքերում՝ խցանում են նրանց և խափանում մաղձի արտածո-  
րանքը 12-մատնյա աղիքի մեջ, վորից խախտվում է կենդանու  
մարսողությունը:

Մշտապես գտնվելով անասունի լյարդում, ֆասցիոլան ար-  
տաթորում է որդանիզմը քայքայող խիստ ազդեցուցիչ թունա-  
վոր նյութեր: Այդ նյութերն ընդունակ են կազմափոխելու մաղ-  
ձի բազադրությունը, մակարդելով նրան և չեղոքացնելով նրա  
մարսողական ուժը. այնուհետև նրանք ազդում են նաև արյան  
վրա, նոսրացնելով (հեղուկացնելով) նրան, շնորհիվ թունավոր  
նյութերից արյունադնդիկների լուծման: Այդ թունավոր նյութերն  
այնչպի հզոր են ազդում, վոր յեթե նրա մի փոքր քանակությու-  
նը սրսկենք փորձնական խոզուկի վորովայնի խոռոչի մեջ՝ կեն-  
դանին անմիջապես կմահանա:

Վերջապես, ֆասցիոլաների պատճառած լյարդի վերքերի մեջ  
յեթքեմի ընկնում են դանազան մանրիներ, առաջացնում են

լյարդի թարախապալարներ և դրանով ավելի յեն ծանրացնում հիվանդութեան ընթացքը:

Ֆասցիոլաների մնասակար ազդեցութեան հետևանքով, հիվանդ կենդանիների լյարդն իր ծավալով մեծանում և և յերբեմն ծածկվում և արյան բծերով, մաղձային անցքերը հաստանում են, վորոնք սեղմելուց՝ արտածորում են գորշ-կարմրագույն լորձ և դրա հետ միասին ֆասցիոլաներ:

Այդպիսով, վերևում հիշված փոփոխութեաններն ամենից առաջ խախտում են լյարդի և աղիքների աշխատանքը և փոփոխում են արյան կազմը, վորից խանգարվում և ամբողջ օրգանիզմի գործունեյութեանը:

Այս հիվանդութեանն առանձնապես կորստաբեր և լինում մասողաչ կամ վատ խնամքից հյուծված և թուլացած կենդանիների համար. այնինչ, լավ կերն ու խնամքը բարձրացնում են օրգանիզմի ուժը՝ ճիճուների մնասաբեր ազդեցութեան դեմ պայքարելու համար: Յեվ հենց այդ և պատճառը, վոր մասողաչ և հյուծված անասունները ֆասցիոլոզից մեծ մասամբ մահանում են, մինչդեռ հասակավորներն ու գեղերը—դիմանում են:

Ընտանի կենդանիներից ֆասցիոլոզով ամենից շատ տառապում են վոչխարները, ապա խոշոր յեղջերավոր անասունն ու այծը և ավելի սակավ—ձին, եշն ու խոզը:

## ՎՈՋԻԱՐՆԵՐԻ ՖԱՍՑԻՈԼՈԶԸ

Ինչպես արդեն ասացինք, ընտանի կենդանիներից ամենից հաճախ ֆասցիոլոզով տառապում են վոչխարները, վորոնց հիվանդութեան ընթացքն ավելի սուր և լինում, այսինքն՝ համեմատած ուրիշ կենդանիների հետ, հիվանդութեան նշանները վոչխարների վրա արտահայտված են լինում ավելի սուր:

Հիվանդութեան զարգացումն ունենում և յերեք շրջան: Սկզբնական շրջանը վորևիցե հիվանդագին նշաններով չի արտահայտվում. ընդհակառակը՝ այդ շրջանում, վոր տևում և սեպտեմբերից մինչև դեկտեմբեր—հունվար ամիսները, վոչխարներն ընդունակ են լինում նույնիսկ պարարտանալու:

Յերկրորդ շրջանում, (հունվար—փետրվար) վոչխարները նիհարում են, նկատվում և թուլութեան, թոշնածութեան և ախոր-

ժակի պակաս շիվանդները շուտով հոյնում են, արագորեն նիհարում են, հաճախակի և յերկար պառկում են և հոտից հեռ են մնում: շիվանդների բերնի և աչքերի յորձաթաղանթը զժողոյն և լինում, յերբեմն նույնիսկ դեղնավուն: Կենդանու բուրդը լինում և չոր, առանց փայլի և հեշտությամբ թափվում և, մանավանդ կողերի և կրծքի վրա:

Շիվանդության հետագա, յերրորդ շրջանում (փետրվար — մարտ) հայտաբերվում են այտուցներ (փափուկ, խմորանման ուռուցքներ) ծնոտի տակ, կոպիւրի, կրծքի և փորի վրա, վորից հետո արագորեն վրա յն հասնում մարտողության խանգարում՝ լուծ կամ պնդություն: Կենդանին որեցոր հյուճվում և և ուժասպառ լինելով՝ մահանում է:

Վերնում հիշված նշանները վոչխարների վրա հայտաբերելիս՝ հնարավոր և լինում կասկածել ֆասցիտոլոզ, բայց հիվանդության բնույթը ճշգրիտ կերպով կարելի յն վորոշել միմիայն կենդանու աղբը հետազոտելու միջոցով, յերբ նրա մեջ հայտաբերվում են ֆասցիտոլայի ձվեր: Վերջիններս տեսանելի յեն միմիայն մանրադետի տակ: Հետևապես, կասկածի ժամանակ հիվանդությունը ճշտորեն վորոշելու համար անհրաժեշտ և գրմել անասնաբույժի ոգնության:

Անհամեմատ հեշտ և ֆասցիտոլոզը ճանաչել վոչխարների դիակի վրա, հիվանդ վոչխարներին մորթելիս, յերբ նրանց լյարդում հեշտությամբ հայտաբերվում են ֆասցիտաներու Ուստի, հիվանդությունը ճշտորեն վորոշելու համար յերբեմն անհրաժեշտ և լինում հոտից ջոկել հիվանդությունն արտահայտված նշաններ ունեցող մի վոչխար և նրան մորթել, մորթելուց հետո, հետազոտելով լյարդը՝ հաստատել տվյալ հիվանդության գոյությունը: Եթե ֆասցիտոլոզի գոյությունը հաստատվի՝ ամենայն հավանականությամբ կարելի յն յենթադրել, վոր նույն տնտեսության կենդանիներից շատերը տառապում են նույն հիվանդությամբ:

Ֆասցիտոլոզի տևողությունը, յեթե նա մահացու յեղք չի ունենում՝ չափազանց տարբեր է: Շիվանդ վոչխարները չափազանց դյուրազգաց են լինում և հիշտությամբ յենթարկվում են ուրիշ հիվանդությունների:

Սովորաբար, յեթե վարակվելուց հետո, 6—8 ամսվա բնթացքում կենդանին չի մահանում, դարձանը, արոտավայրում նա

սկսում ե հետզհետե կազդուելի ե հիվանդութեան նշաններն անհետանում են Արոտավայրի աշգլխի բարերար ազդեցութեանը կայանում ե նրանում, վոր նախ՝ արոտավայրի թարմ ե առատ կերը բարձրացնում ե հիվանդի ուժերը ե նրա դիմադրողականութեանը հիվանդութեան դեմ ե ապա՝ նույն ժամանակաշրջանում (ապրիլ—մայիս) որգանիզմում դանված ճիճուները հասունանում են ե իրենք սկսում են դուրս գալ կենդանու լյարդից:

Ֆասցիոլոզով հիվանդ վոչխարի մեծն իբրե սննդամթերք կարելի չե ոգտագործել, միայն անհրաժեշտ ե վոչոչացնել լյարդը ե այսուցավոր (ուռած) մասերը, վորոնց անհրաժեշտ ե թաղել խոր վորտի մեջ, վորովհետե նրանցում (լյարդ) գտնված հասունացած ճիճուներն ու նրանց ձվերը, մանավանդ խոնավ վայրերում, հեշտութեամբ կարող են նոր վարակումների ազդուր հանդիսանար

## ՏԱՎԱՐԻ ՅԵՎ ԱՅՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՖԱՍՅԻՈԼՈԶԸ

Համեմատած վոչխարների հետ, խոշոր յեղջերավոր անասունը, ֆասցիոլոզի ծանր ձևով տառապում ե ավելի սակավ, թեև նրանց լյարդում ել ֆասցիոլաներ հայտարբերվում են նույնպես հաճախակի:

Հիվանդութեան նշաններն արտահայտվում են նույն ձևերով, ինչպես ե վոչխարների վրա, բայց տավարը, շնորհիվ իր որգանիզմի դիմացկունութեան՝ ավելի թեթե ե անցկացնում հիվանդութեանը: Սակայն, չնայած դրան, խոշոր յեղջերավոր անասուններն ու մանավանդ հորթերը, նույնպես յերբեմն մահանում են ֆասցիոլոզից:

Կուպերի, կրծքի, յենթածնոտային այտուցներ ե վորովայնային ու կրծքի խոռոչի ջրգողութեան նշաններ՝ խոշոր յեղջերավոր անասունների ու գոմեշների վրա սակավ են նկատվում: Ավելի հաճախ աչքի յեն ընկնում հետևյալ նշանները՝ սննդատուութեան խանգարում, կամակոր ախորժակ, լուծ, ժամանակ առ ժամանակ փքանք, իսկ յերբեմն—տենդ (մարմնի ջերմութեան բարձրացում). ծանր դեպքերում, բացի դրանից՝ աչքի ե բերնի լորձաթաղանթների դժգունութեան ե դեղնութեան:

Թեև ֆասցիոլոզից խոշոր յեղջերավոր անասունների մահացութեան դեպքեր ավելի սակավ են լինում, բայց ե այնպես, այդ-

պիսիք լինում են, յերբ նրանց լյարդում ճիճուները լինում են մեծ քանակությամբ (250—300 հասունացած ճիճու)։

Տափարի Ֆասցիոլոզով հիվանդանալու հետեվանքով առաջացած անտեսական վնասը նույնպես մեծ է, ինչպես և վոչխարների հիվանդության ժամանակ, վորուհետև հիվանդ կենդանին զգալիորեն կորցնում է իր կենդանի քաշը, այսինքն՝ միսն ու ճարպը և նրա կաթնատվությունն ու աշխատունակությունը նվազում են. մի խոսքով, անասունը կորցնում է իր արդյունավետությունը։ Այդ ֆուսաները հաշվի առնելով և զբամական չափի վերածելով ստացվում է շատ խոշոր գուժար։

Ձիերի, ջորիների և եղբրի վրա Ֆասցիոլոզը, վերևում հիշված սուր նշաններով, հազվադեպ է արտահայտվում։ Նրանց վրա ամենից հաճախ նկատվում է աչքերի և բերնի լորձաթաղանթի դեղնություն, ընդհանուր նիհարություն և լուծ։

Ինչպես վերևում արդեն ասացինք, միմիայն արտաքին նշանների հիման վրա հիվանդության բնույթը ճշգրիտ վորոշելը դժվար է, վորովհետև նույնպիսի նշաններ կարող են հայտաբերվել նաև ուրիշ հիվանդությունների ժամանակ։ Ուստի, Ֆասցիոլոզի կասկած լինելու դեպքում, հիվանդությունը վորոշելու համար անհրաժեշտ է մանրադիտակի միջոցով հետազոտության յենթարկել կենդանու աղբը՝ ճիճվի ձվերը հայտաբերելու նպատակով և վորձնակտն դիտհերձության յենթարկել հիվանդ անասուններից մեկը ու ըստ այնմ ել վորոշել հիվանդությունը։

### ՖԱՍՑԻՈԼՈԶԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Ֆասցիոլոզով հիվանդ կենդանիներին հնարավոր է լինում բուժել այն դեպքում միայն, յեթև հաջողվի նրանց լյարդից վտարել ճիճուներին։ Սակայն վերջիններս այնպես հարմարված են լինում կենդանիների որդանիզմում ապրելու, վոր նրանք հեշտությամբ և առանց ֆուսավելու դիմանում են խիստ ազդեցուցիչ զանազան դեղերի դորձածությանը։ Յեւ այդ է պատճառը, վոր յերկար ժամանակ չեյին դառնվում այնպիսի միջոցներ, վորոնք ընդունակ լինեյին ճիճուներին սպանելու կամ որդանիզմից դուրս վտարելու։ Յեւ վերջին տարիների ընթացքում միայն առաջարկված են մի



քանի դեղեր, վորոնք հաստատապես մահացնում են ֆասցիոլ ներին:

Համարյա մինչև 1912 թվականը ֆասցիոլոզի բուժման հարցը դեռ լուծում չէր ստացել: 1912 թվին, Ֆրանսիայում ծագած ֆասցիոլոզի խոշոր համաճարակի առնչությամբ, Ֆրանսացի դիտնականներ Ռայեն, Մուսսյուն և Անրին դրադվեցին ֆասցիոլոզի բուժման ուսումնասիրությունը: Մի շարք զանազան դեղեր գործածելուց հետո, հիշյալ դիտնականները պարզեցին, վոր ֆասցիոլոզի բուժման համար լավագույն դեղն է—բուռ պտերի կոճղարմատի մուզը (Extractum filicis maris), վոր մուգ կանաչագույն, անախորժ հոտով և կծու—դառնահամ հեղուկ է: Այդ դեղը գործադրելուց՝ հասնելով աղիքներին, ներծծվում է արյան մեջ, վորի հոսանքով գալիս է մինչև լյարդը և թունավորում է ճիճուներին: Սակայն այդ դեղի միանվազ գործածությունը հնարավոր չի մահացնել բոլոր ֆասցիոլաներին, ուստի անհրաժեշտ է լինում միևնույն հիվանդին, մի քանի որվա ընթացքում տալ նույն դեղից 3-4-5 անգամ: Հիշված դեղն ընդունելուց հետո, ճիճուները լյարդում կնճռոտում են, մահանում և քայքայված վիճակում որգանիզմից արտաթորվում են աղբի հետ: Բայց այդ դեղը մահաբեր լինելով ճիճուների համար, միևնույն ժամանակ թունավոր ազդեցություն է գործում և հիվանդ կենդանու վրա, ուստի այդ դեղի գործածությունը կարելի չէ վստահել միմիայն անտանարություն կամ անասնաբուժակին:

1917 թվին, հայտնի գիտնական Մարիկն առաջարկել է ֆասցիոլոզի բուժման համար իր պատրաստած «դիստոլ» դեղը, վորի դիտավոր ազդու նյութն է նույնպես արու սլտերի կոճղարմատի մուզը: Բազմաթիվ անասնաբուժների տված դնահատականների համաձայն, «դիստոլից» ստացված արդյունքները լավ են, բայց վերջերս, այդ դեղը կազմափոխված է:

1925 թ. ֆասցիոլոզի բուժման համար հանդես է յիկել մի նոր դեղ՝ «ածխածնի քառաքլորատ»: Բազմաթիվ փորձերով թե ԽՍՀՄ-ում և թե արտասահմանում հաստատված է, վոր այդ դեղը տալիս է վոչխարների բուժման լավագույն արդյունքը: Սակայն տավարի բուժման համար այդ դեղը պիտանի չէ, վորովհետև նրա գործադրությունը (խմացնելով) հաճախ ընթանում է բարդություններով, իսկ յերբեմն նաև կենդանու մահացությունը: Ուստի, մի քանի

ժամանակներ ասաջարկում են ֆասցիոյոյդի բուժման ժամանակ, ածխածնի քառաքլորատի հետ միաժամանակ գործադրել նաև կայ-  
ցիտւմի (կրածնի) աղեր կամ ասվուլտ և կամ սխեսի դորման,  
վորոնք իրրև թե ապահովում են կենդանուն թունազտրմելուց:

## ՎՈՅԻՍԱՐՆԵՐԻ ՖԱՍՑԻՈՒՈՅԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Փորձված բազմաթիւ դեղերի մեջ, վոչխարների ֆասցիոյոյդի  
բուժման համար, ածխածնի քառաքլորատը հանդիսանում և ներ-  
կայումս միակը և լավագույնը: Դա անդուշն հեղուկ և քլորո-  
ֆորմի հատով: Վոչխարները, համեմատաբար, հեշտութեամբ են տա-  
նում այդ դեղը, վորից ֆասցիոյաները մահանում են: Դեղը տըր-  
վում և վոչխարներին դոնդուլից (ժկատին) պատրաստած պար-  
կուճների (կապսուլ) մեջ կամ շից լցնելով դեղը կենդանու բե-  
րանը, նախորք լորձային խաշուկով կամ ձեթով և կամ ջրով  
խառնած: Յերբեմն ածխածնի քառաքլորատը գործադրում են յին-  
թամաշկային սրահման ձևով, հեղուկ պարաֆինով խառնած: Բոլոր  
դեպքերում ել այդ դեղն արագորեն մահացնում և ֆասցիոյանե-  
րին, և բուժումից 3—4 օր հետո վոչխարի յարգում չի մնում վոչ  
մի ճիճու: Համեմատած ուրիշ դեղերի հետ, այս դեղը եժամաղին  
և և ներկայումս արատադրվում և ՊՄՀՄ-ում:

Յերբեմն բուժման ընթացքում և բուժումից անմիջապես  
հետո նկատվում է, վոր վոչխարի հիվանդութեանը կարծես սաստ-  
կանում է՝ կենդանին կորցնում է ախորժակը, հտից հետ է մնում  
և այն. սակայն այդ ամենից հաճախ նկատվում է հյուժված և  
հիվանդութեամբ մաշված անասունների վրա, կամ յերբ բուժումը  
տեղի յե ունենում չափազանց ուշացած, յերբ վոչխարի որդանիդ-  
մը արդեն քայքայված է լինում հիվանդութեամբ և առանձնակի  
դեպքերում մինչև իսկ մահացութեան դեպքեր են լինում բուժ-  
ման ժամանակ: Ուստի հյուժված վոչխարների բուժումը պետք  
է կատարել զգուշութեամբ, բաժանելով դեղի դոզան (չափը) նվազ  
բաժինների և գործադրելով այն մի քանի նվազ:

Բուժումից հետո սովորաբար նկատելի յե լինում հիվանդ  
վոչխարների առողջական վիճակի արագ բարելավումը և առողջա-  
ցումը:

Վոչխարների ֆասցիոյոյդի բուժումն ածխածնի քառաքլորատ-

տով գործադրվել և լավ արդյունքներով նաև մեզ մոտ՝ Հայաստանում: 1930 թվի դարնանք, Ն. Ախտայի շրջանում, մենք բուժման ենք յենթարկել 200 գլուխ հիվանդ վոչխար, հետևյալ արդյունքներով՝ անխածնի քառաքլորատը բերնից գործադրելուց հետո, 2—4 որվա ընթացքում, հյուժված և հիվանդություն սուր նրաններ ցուցաբերող վոչխարների հիվանդությունը սաստկացավ՝ հայտաբերվեց տհնդ, ախորժակի կորուստ, դժվարացած շարժողություն, կենդանիները հոտից հետ ելին մնում, բայց այդ նշաններն անհետացան՝ դեղի ազդեցություն տակ յարդից ճիճուների դուրս դալուց 2—3 որ հետո և վոչխարներն սկսեցին առողջանալ:

Բուժման յենթարկված 200 գլուխ վոչխարներից չորսը (հիւներից) վիժեցին և յերկուսը մահացան, չափազանց հյուժվածություն և թուլություն հետևանքով: Դիտարձման միջոցով հաստատվեց նրանց յարդերում կուտակված ճիճուների չափազանց մեծ քանակությունը:


Բուժման արդյունքներն ստուգելիս, մորթած վոչխարների յարդերում ճիճուներ այլևս չհայտաբերվեցին, թեև յարդերում առաջացած փոփոխությունները հաստատում ելին, վոր յերբեմն նրանց մեջ յեղել և ֆասցիոլաների մեծ քանակություն: Այդպիսով յեղբափակում ենք, վոր հյուժված կենդանիները բուժման ժամանակ կարող են մահանալ, իսկ հղի վոչխարների նկատմամբ պետք և զգուշ լինել, գործադրելով դեղը մի քանի նվազ և մանր բաժիններով:

Նույն դեղը 1932 թվին գործադրվել և Նոր-Բայազետի շրջանում, վորտեղ ստացվել են Հողժողկոմատի տվյալների համաձայն՝ նույնպիսի հաջող արդյունքներ:

Փասցիոլոզի բուժման համար լավագույն դեղերից մեկն ևլ համարվում և վերևում հիշված արու պտերի կոճղարմատի մուզը, վորը տրվում և հիվանդ վոչխարներին դոնդուղ պարկուճներում 3—5 անգամ, մի շաբաթվա ընթացքում:

## ՏԱՎԱՐԻ ՖԱՍՑԻՈԼՈԶԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Տավարի ֆասցիոլոզի բուժման համար գործածական են հետևյալ դեղերը՝ 1. Արու պտերի կոճղարմատի մուզը—մինչև հնգապատիկ քանակությամբ բուսական յուղի (ձեթի) մեջ խառնած:



2. Ածխածնի քառաքլորաւը տալարի վրա դործադրելուց՝ հաճախակի մահացու թունալորում ե պատճառուեմ, ուստի, նրա ազդեցութեանը մեղմացնելու համար, առաջարկված ե դործադրել առաջին յերկու դեղերի խառնուրդը: 3. Տալարի ֆասցիոլոզի բուժման համար ուշադրութեան արժանի յե նաև «Նեոսերապիա» կոչված դեղը, վորի գլխավոր բաղադրիչ նյութն ե ետիլենի քառաքլորաւը: 4. Ներկայումս Մոսկվայի փորձնական անասնաբուժութեան Պետական ինստիտուտն առաջարկել ե «Իլիկոլ» դեղը, վորն իր մեջ պարունակում ե գլխավորապես ածխածնի քառաքլորաւը ե արու պտերի կոճղարմատի մուգ:

Տալարի ֆասցիոլոզի բուժման մեթոդների ուսումնասիրութեանն անասնաբուժական դիտա-հետազոտական հիմնարկները մինչև այժմ ել դեռ շարունակում են:

Տալարի ֆասցիոլոզը բուժելիս պետք ե նկատի ունենալ, վոր բուժումն ուժասպառ ե անում հիվանդին ե ժամանակավորապես խանգարում ե նրա մարտդութեանը, ուստի նպատակահարմար ե բուժելիս ե բուժելուց դեռ մի քանի որ առաջ հիվանդ կենդանուն տալ առատ ե սննդաբար կեր:

Հյուծված հիվանդներին բուժելուց պետք ե ձեռնպահ մնալ, վորովհետև հաճախ նրանց բուժումը տալիս ե բացասական արդյունք:

Ձիերի, եղերի, խոզերի ե ուղտերի ֆասցիոլոզի բուժման համար դեռ մշակված միջոցներ չկան. ի դեպ պետք ե ասել, վոր հիշված կենդանիների մեջ ֆասցիոլոզը համաճարակի բնույթ չի ունենում:

## ՖԱՍՑԻՈԼՈԶԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Փասցիոլոզի մեր անասնապահութեանը պատճառած վնասները հաշիվել ե վերածել դրամական գումարի շատ դժվար ե, վորովհետև մեր գրականութեան մեջ չկան վիճակագրութեան վրա հիմնված տվյալներ անասունների մահացութեան մասին: Բայց գիտնալով, թե ինչ դործոններից ե գումարվում այդ մակարույթի պատճառած վնասը՝ յուրաքանչյուր ընթերցող ինքը հնարավորութեան կուրծնա համապատասխան յեղրակացութեան անելու:

Փասցիոլոզը, յերբեմն ընդունելով համաճարակի բնույթ՝ կոտորում ե վոչխարների ու տալարի մեծ քանակութեան: Ինչպես

վերևում ասել էյինք արդեն, այդ հիվանդության համաճարակները յերբեմն լինում են այնքան կորստաբեր, վոր ԽՍՀՄ-ի մի շարք շրջաններում վոչխարարուծությունը կորցրել է իր նշանակությունը, վորպէս դուղատնտեսության ճյուղ:

Պասցիոլոգով հիվանդ անասուններին մորթելիս, սպանդանոցներում ամեն որ վոչնչացվում են մսամթերքի մեծ քանակություններ, վորից պետությունը զգալի վնասներ է կրում:

Ճիճվային բազմաթիվ հիվանդությունների մեջ ֆասցիոլոգն ամենից ավելի իջեցնում է տնասունների տնտեսական արժեքը, դանդաղեցնելով մատղաշ անասունների աճումն ու զարգացումը, իջեցնելով հասակավորների արդուենավետությունը (կաթ, միս, ճարպ, բուրդ, աշխատունակություն):

Ֆասցիոլոգը, ինչպէս և այլ ճիճվային հիվանդությունները, տրամադրում են կենդանիներին յինթարկվելու այլ և այլ հիվանդությունների, իջեցնելով նրանց որդանիքով ինքնապաշտպանության ընդունակությունը:

Յեւ վերջապէս, համապատասխան պայմաններում, ֆասցիոլոգով կարող են վարակվել և մարդիկ: Թեև ճիշտ է, վոր այդ հիվանդությունը մի կենդանուց մյուսին կամ կենդանուց մարդուն անմիջականորեն չի կարող փոխանցվել, բայց հիվանդ կենդանին, մշտապէս իր մեջ ճիճուներ կրելով և վարակլ տարածելով բնության մեջ, ամենուրեք՝ հնարավորություն է ստեղծում միևնույն ձևով, ինչպէս կենդանիներին, վարակելու նաև մարդուն, վորից պէտք է շատ զգուշ լինել:

## ՅԱՍՅԻՈՒԹՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱԲԵԼՈՒ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԸ

Մակարույձի կենսագործունելության (աճեցման և զարգացման) հետ ծանոթանալուց հետո զժվար չէ համապատասխան պրոֆիլակտիկ (նախազգուշական կամ ախտարգելական) միջոցների ընարությունը:

Տնտեսությունը ֆասցիոլոգից ազատելու համար բավական չէ հիվանդ անասունների լյարդում գտնված ճիճուների վոչնչացումը միայն, վորովհետև ամենուրեք, վորտեղ յեղել են հիվանդ կենդանիները՝ արոտավայրը, լճակները, առուները, փարախները

և այլն, — այդ բոլորը վարակված են լինում Փասցիոլայի ձվերով դթրթուերներով:

Փասցիոլոզը տնտեսության մեջ վոչնչացնելու համար անհրաժեշտ է հիվանդ կենդանիների բուժման հետ դուզընթացարար առողջացնել (ախտահանել) արոտավայրը, ջրատեղերը, փարախները և այլն:

Փասցիոլոզի վոչնչացման միջոցառումները կիրառվում են 3 ուղղությամբ՝ ա) հասունացած ճիճուների վոչնչացմամբ, բ) մակարույծի ձվերի և թրթուերների վոչնչացմամբ և դ) արոտավայրերի, ջրատեղերի և փարախների ախտահանությամբ, այսինքն՝ խիունջների վոչնչացմամբ:

Հասունացած ճիճուների վոչնչացումը հնարավոր է լինում կենդանիներին բուժելով. սակայն պետք է հիշել, վոր տեղի աղդեցությունից մահացած ճիճուներն իրենց մեջ կրում են կենսունակ ձվեր, վորոնցից կարող է զարգանալ մակարույծի նոր սերունդ: Վարակողի լյարդից վտարված ճիճուները վարակել նոր աղբյուր չդառնան՝ բուժումից հետո կենդանու արտաթորած աղբը պետք է խնամքով հավաքել, վտուել և կամ թաղել կես մետրից վոչ պակաս խորության վտտի մեջ: Իրա համար, բուժման ընթացքում հիվանդ կենդանիներին 5—7 որ պետք է պահել առանձնացրած փարախում կամ այդ նպատակին հատկացված այլ տեղում:

Հիվանդ կենդանիների բուժումը ձեռնարկելուց՝ անհրաժեշտ է բուժման յենթարկել տնտեսության բոլոր անասուններին, ըստ վորում մնացած թեկուզ մի հիվանդ անասուն կարող է նոր վարակումների պատճառ դառնալ:

Բուժումը նպատակահարմար է կիրառել տարեկան յերկու անգամ՝ դարնան, անասուններին արոտավայր տեղավորելուց 2—3 շաբաթ առաջ և աշնան՝ արոտավայրից վերադառնալու նախորյակին:

Փասցիոլոզից անապահով տնտեսություններում, անասունների աղբը սովորաբար սլարունակում է իր մեջ մեծ քանակությամբ Փասցիոլայի ձվեր, ուստի և այդպիսի աղբը հողի պարարտացման համար չպիտի գործածվի, այլ պիտի այրվի և կամ թաղվի հողի տակ: Իսկ յեթե աղբը ծայր աստիճան անհրաժեշտ է պարարտացման նպատակների համար՝ այդ դեպքում պետք է աղբը

հավաքել հատուկ կառուցած աղբանոցում, վորտեղ նեխման հետևանքով զարգացած ջերմությունից ( $70^{\circ}$ ) ճիճվի ձվերը վոչնչանում են, կորցնելով իրենց կենսունակութունը:

Փտած աղբը համարվում է բարձրորակ պարարտանյութ, ուստի աղբանոցի կառուցումը խորհրտանտեսություններում և կուտանտեսություններում կարող է միաժամանակ բավարարել թե գյուղատնտեսական և թե սանիտարական պահանջներին:

Բացի հիվանդ անասունների աղբից, ֆասցիոլայի ձվեր մեծ քանակությամբ լինում են սպանդանոցներում մորթած վոչխարներից խոտանված յարդերում, ուստի պետք է խստորեն հետևել, վորպեսզի խոտանված մսամթերքն այս ու այն կողմ չզցվի կամ շներին չտրվի, այլ խնամքով հավաքելուց հետո այրելով կամ թաղելով վոչնչացվի:

Հասունացած ճիճուների և նրանց ձվերի դեմ կիրառվող պայքարի հետ զուգընթացաբար, անհրաժեշտ են միջոցառումներ նաև խխունջների դեմ, վորպես ֆասցիոլոզի տարածման միջնորդների, վորովհետև մենք արդեն գիտենք, վոր ֆասցիոլայի թրթուրներն իրենց զարգացման համար պետք է անպայմանորեն անցնեն խխունջի որդանիզմով, վորի մարմնում միայն կարող են նրանք սնվել և բազմանալ: Խխունջը, ինչպես ասել եյինք, ապրում է գլխավորապես կավոտ կամ տղմոտ հատակ ունեցող ծանծաղուտներում, փոքր լճակներում, ջրակույտերում, ճահճացած վայրերում և այլն: Հոտած կամ արագ նեխվող ջրերում խխունջը չի ապրում: Նա հաճախակի գտնվում է նաև արոտավայրերում, ջրատեղերի յեզերքներում, անասունների սմբակներից և կճղակներից գոյացած փոսերում և այլն: Անձրևային տարիներին, յերբ արոտավայրերում գոյանում են բազմաթիվ ջրակույտեր՝ խխունջները բազմանում են մեծ չափերով, իսկ նրանց միջոցով բազմանում են և ֆասցիոլայի թրթուրները: Յեվ այդ է պատճառը, վոր ֆասցիոլոզի համաճարակները զարգանում են գլխավորապես անձրևային տարիներին:

Խխունջների վոչնչացման համար անհրաժեշտ է ճահճոտ վայրերի և ջրակույտերի չորացումը: Դրա հետ միաժամանակ գործադրվում են նաև խխունջներին վոչնչացնող քիմիական նյութեր, ինչպես որինակ՝ պղնձի արջասալը, վորի լուծույթը (1 գրամը 1—10 գոլյլ ջրում լուծած) սպանում է խխունջներին: Նույն-

պիսի ազդեցութիւն ունի նաև կրթութիւնը (5 դրամը 1 դուշ 2ը-  
րում), վորը հինգ բողոյում սպանում է խխունջներն Մահացու  
ազդեցութիւն ունի նրանց վրա և սովորական կերակրի այրը:  
Յեթև խխունջների գոյութիւն ունեցող 2րամբարի մեջ թափենք  
հիշված նյութերից մեկնումս կը կարող ենք վատանել՝ վոր խ-  
խունջները կ'ուշնչանան:

Մենք գիտենք նմանապես, վոր խխունջի մարմնից դուր դա-  
լուց հետո, ֆասցիոլայի թրթուրները (ազդեցակալիներն) ամրա-  
նում են բույսերի ցողուններին. անասուններին արածելիս այդ  
թրթուրները կուլ տալուց ապահովելու համար, նպատակահար-  
մար է այդպիսի տեղերը չորագործել վորպէս արտաւայր և տը-  
վյալ տեղերում խտար հնձել վորքան հնարավոր և արմատից  
բարձր:

### ՎՈՅԽԱՐՆԵՐԻ ՃԻՃՎԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ճասցիոլոգի դեմ կիրառվող պայքարի համար՝ միջոցառում-  
ների հիմք է ծառայելու հիվանդ անասունների ճիճվահանութիւ-  
նը (բուժումը), վորը, ինչպէս վերևում ասացինք, նպատակահար-  
մար է կատարել տարեկան յերկու անգամ՝ դարնանը և աշնանը:

ա) Ճիճվահանութիւն ժամանակ բուժման յենթակա վոչխար-  
ներին պետք է առանձնացնել հատուկ շենքում, վորտեղ անհրա-  
ժեշտ է թողնել նրանց բուժումից հետո 6 որվա ընթացքում:

բ) Նույն ժամանակամիջոցում վոչխարների արտաձորած  
աղբն անհրաժեշտ է թաղել խոր փոսի մեջ կամ այրել:

գ) Վոչխարների ճիճվահանութիւն համար լավագուշն դեղն  
է համարվում ածխածնի քառաքլորատը, վոր տրվում է ամեն մի  
վոչխարին յերկու դրամ, իսկ մատղաշներին և հյուժվածներին  
կիսով չափ—մի դրամ: Պետք է հիշել նմանապես, վոր ածխածնի  
քառաքլորատն ընդունակ է մահացնելու միմիայն հասունացած  
ճիճուներին, վոչ մի ազդեցութիւն չունենալով դեռահասների  
և թրթուրների վրա, վորոնք մնալով կենդանու լյարդում, ապա-  
գայում կաճեն և կնորոգեն հիվանդութիւնը: Ուստի անհրա-  
ժեշտ է բուժումից 5-6 շաբաթ հետո, բոլոր վոչխարներին  
կրկին հետագոտել և աղբի մեջ ձվեր հայտարեբերելս՝ նորից բուժ-  
ման յենթարկել:



Ածխածնի քառաքլորաթը արվում է յերկու ձևով՝ հեղուկ վիճակում կամ դոնդողային (ժելատին) պատրաստի պարկուճաների մեջ:

Հեղուկ ձևով գործադրվելիս, մարսողական որդանների լորձաթաղանթը դրգեելուց պաշտպանելու համար, դեղը նախորոք խառնում են ապակյա շշի մեջ լորձային խաշուկով կամ ձեթով: Այնուհետև կենդանու գլուխը քիչ բարձրացնում են և շշի վզիկը մացնելով նրա բերանը՝ դեղը լցնում են կում-կում:


Ավելի հեշտ է և հարմար դոնդողային պարկուճաների գործադրությունը: Դրա համար աշխատակիցներից մեկը կանդնած վոշխարին սպհում է սեղմելով իր ծնկները մեջ և բերանը բաց և անում ներքևի և վերևի ատամներից դցած ժապավենների միջոցով, կենդանու գլուխը պետք է լինի քիչ ձգված ու բարձր: Մյուս աշխատակիցն իր մատների ծայրով դնում է պարկուճը կենդանու լեղվի արմատի վրա, վորից հետո ժապավենն անմիջապես բաց են թողնում, վոր կենդանին բերանը փակելով կուլ տա դեղը: Պարկուճը կենդանու բերանը կարելի չէ մոցնել նաև հատուկ աքցանի միջոցով:

\* \* \*

Ինչպես տեսնում ենք, ֆասցիոլոգի բուժման և կենդանիներին աչք հիվանդությունից պաշտպանելու համար ներկայումս գոյություն ունին բազմաթիվ և վստահելի միջոցներ, վորոնք հաստատանալիս և ճշտորեն կիրառելու դեպքում հնարավոր է ուղտակար արդյունքներ ստանալ և սոց-անասնապահությունն ապահովել դուր և մեծ կորուստներից:

## Յ Ա Ն Կ

1. Մի քանի խոսք լյարդաճիճվային հիվանդութեան ժամին . . . . .	3
2. Ֆասցիոլայի զարգացումը (կենսաբանությունը) . . . . .	4
3. Ֆասցիոլոզը վորպես համատարած հիվանդություն . . . . .	7
4. Հիվանդութեան ընթացքը . . . . .	8
5. Ֆասցիոլոզի պատճառած փոփոխությունները կենդանու որդանիդմում . . . . .	10
6. Վոչխարների ֆասցիոլոզը . . . . .	11
7. Տավարի և այլ անասունների ֆասցիոլոզը . . . . .	13
8. Ֆասցիոլոզի բուժումը . . . . .	14
9. Վոչխարների ֆասցիոլոզի բուժումը . . . . .	16
10. Տավարի ֆասցիոլոզի բուժումը . . . . .	17
11. Ֆասցիոլոզի պատճառած տնտեսական վեասները . . . . .	18
12. Ֆասցիոլոզի ցեմ պայքարելու միջոցառումները . . . . .	19
13. Վոչխարների ճիճվահանությունը . . . . .	22



Գառ. Խմբագրեր՝ Խ. Ոհանյան  
 Մասն. Խմբ.՝ Ռ. Արմենյան  
 Տեխ. Խմբագրեր՝ Պ. Սարգսյան  
 Մրբագրիչ՝ Սոս Հակոբյան  
 Հանձնված և արտագրութեան 1934 թ. հուն. 1-ին  
 Ստորագրվել և ապագրելու 1934 թ. հուն. 5-ին  
 Գատվեր № 573      Տիրած 3000      Գլավիտ 8848

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002326

A  $\frac{\text{II}}{24154}$

ԳԻՆԸ 40 ԿՈՄ.

034.



Նարեկոմ ՍՍՀ Արմենիա—Վերտերինարիոս Էւրաւաւենիւ

Զձ. ԴաւթյաՆ

**Փասցիոլեզ ձոմաճնիկ յիւոտնիկ  
ի Բորյբա ս նիմ**